**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ**
**ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

**ք. Վեդի** **09/10/2024**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
# ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու թվով **<u>21</u>** անդամներ:

***<u>Ավագանու նիստից բացակայում էին</u>՝***

*1. «Իմ հզոր համայնք» խմբակցության անդամներ՝ Գոհար Մարգարյանը, Սևակ Աղաբեկյանը.*
*1.1. Գոհար Մարգարյանի բացակայության պատճառը պայմանավորված է վերջինիս վարարողջ լինելու հանգամանքով.*
*1.2. Սևակ Աղաբեկյանը ավագանու կանոնակարգով սահմանված կարգով չի տեղեկացրել ավագանու նիստից բացակայելու պատճառների մասին:*

*2. «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամներ Նշան Հակոբյանը, Արսեն Կարապետյանը, Ազիզ Հովսեփյանը, Գայանե Սեդրակյանը.*
*2.1. Գայանե Սեդրակյանի բացակայության պատճառը պայմանավորված է վերջինիս վարարողջ լինելու և հիվանդանոցային պայմաններում բուժում ստանալու հանգամանքով.*
*2.2. Ազիզ Հովսեփյանի բացակայությունը պայմանավորված է աշխատավայրում համապատասխան հերթափոխային աշխատակցի փոխարինման անհնարինության հանգամանքով.*
*2.3. Նշան Հակոբյանը և Արսեն Կարապետյանը ավագանու կանոնակարգով սահմանված կարգով չեն տեղեկացրել ավագանու նիստից բացակայելու պատճառների մասին:*

**<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին</u>՝** Վեդի համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարներ, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ, ՀՈԱԿ-ների տնօրեններ, համայնքի բնակիչներ:

**<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Գարիկ Սարգսյանը</u>**

**<u>Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հրաչյա Ստեփանյանը</u>**

**<u>Լսեցին 1</u>.** ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***/Զեկ. Հ.Ստեփանյան/***

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի համաձայն, ղեկավարվելով ավագանու կանոնակարգի 71-րդ կետի դրույթով՝ ***Վեդի համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած՝ Վեդի համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 9-ի հերթական նիստի օրակարգը.

1.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.2. ԳԱԳԻԿ ԱՇՈՏԻ ՍԵԴՐԱԿՅԱՆԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 196-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 03-076-0165-0063 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՐՑԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 03-095-0394-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՆՇԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ՝ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԵՐԻՑ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՍԵՐՈԲ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԵՐԻՑ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԻՄ ՀԶՕՐ ՀԱՄԱՅՆՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՍԵՎԱԿ ԱՂԱԲԵԿՅԱՆԻ՝ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԵՐԻՑ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԸ (ՎԵԴԻ ՔԱՂԱՔԸ) ՆԵՐԱՌՈՂ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՐԱՐԱՏ-8 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:**

Նիստի օրակարգի վերաբերյալ հարցով հանդես եկավ «Իմ հզոր համայնք» խմբակցության ղեկավար Վ.Վարդանյանը, ով նշեց, որ օրակարգի 10-րդ հարցը նախորդ նիստի ընթացքում ընդգրկված է եղել նիստի օրակարգում, որի վերաբերյալ համայնքի ավագանին ընդունել է համապատասխան որոշում: Նիստը վարողը հարցին արձագանքելու համար խոսքը փոխանցեց աշխատակազմի քարտուղար Հ.Ստեփանյանին, ով հաստատեց այն փաստը, որ 2024 թվականի սեպտեմբերի 11-ին գումարված Վեդի համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգում ընդգրկված է եղել Սերոբ Ավետիսյանի՝ ավագանու 2024 թվականի հերթական նստաշրջանի նիստերից և քվեարկություններից բացակայելու մասին հարցը, սակայն վերջինս չի ընդունվել, քանի որ որոշման խմբագրված տեքստը չի ընդունվել նիստին ներկա ավագանու անդամների մեծամասնության կողմից: Աշխատակազմի քարտուղարը նշեց, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ավագանու որոշումներն ընդունվում են ավագանու նիստին ներկա ձայների մեծամասնությամբ: Եվ քանի որ ներկայացված հարցը համապատասխան խմբագրությամբ չի արժանացել ավագանու նիստին ներկա անդամների մեծամասնության հավանությանը, ուստի որոշումը համարվել է չընդունված: Բացի այդ, աշխատակազմի քարտուղարը նշեց, որ ավագանու կանոնակարգի 123-րդ կետը նախատեսում է ավագանու անդամի բացակայությունների վերաբերյալ որոշման նախագծի ներկայացում և քննարկում ավագանու նիստում, հետևաբար նաև քննարկման արդյունքում որոշման կայացում, ուստի վերոգրյալով պայմանավորված էլ նշված հարցը ընդգրկվել է նիստի օրակարգում:

| *Կողմ-12* | *Դեմ -9* | *Ձեռնպահ-0* |
|---|---|---|
| ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ | ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ | |
| ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ | ՀՌՈՒԿՅԱՆ ՆԱՐԵԿ | |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ | ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ | |
| ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՍԵՆ | ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ | |
| ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ | |
| ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՐՈԲ | ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ | |
| ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԵՄՖԻՐԱ | ԹՈՒՐԻԿՅԱՆ ՀԱԿՈԲ | |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ | ԳԵՎՈՐԳՅԱՆ ԻՇԽԱՆ | |
| ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ | | |
| ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ | | |
| ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ | | |

***Որոշումն ընդունված է/կցվում է N 118-Ա որոշումը/***

**Լսեցին 2. ԳԱԳԻԿ ԱՇՈՏԻ ՍԵԴՐԱԿՅԱՆԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ *\/Զեկ. Մ.Ղազարյան/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասով և 245-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթները և Վեդի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու մասին» N 12-Ա որոշումը, հաշվի առնելով Գ.Սեդրակյանի դիմումը և Վեդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***Վեդի համայնքի ավագանին որոշում է.***

1. ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի կազմում ընդգրկված Շաղափ բնակավայրի Արարատյան փողոց 35 տան բնակիչ Գագիկ Աշոտի Սեդրակյանի (ծնված՝ 25.01.1970թ., ն/ք՝ 016072597, տրված՝ 30.10.2013թ., 025-ի կողմից/ անվամբ գրանցված՝ Շաղափ բնակավայրում գտնվող 03-075-0128-0013 կադաստրային ծածկագիրը կրող 0.108 հա բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ տրամադրել 1091 /մեկ հազար իննսունմեկ/ ՀՀ դրամ գումարի չափով հարկային արտոնություն:

2. Գագիկ Աշոտի Սեդրակյանին սեփականության իրավունքով պատկանող, CHEVROLET NIVA 21230 մակնիշի, 17 OU 612 պետհամարանիշի ավտոմեքենայի նկատմամբ տրամադրել փոխադրամիջոցի գույքահարկի գծով՝ 7900 /յոթ հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ գումարի չափով հարկային արտոնություն:

3. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:**

***Կողմ-21*** ***Դեմ -0*** ***Ձեռնպահ-0***

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՐՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԵՄՖԻՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀՌՈՒԿՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԹՈՒՐԻԿՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԻՇԽԱՆ

***Որոշումն ընդունված է/կցվում է N 119-Ա որոշումը/***

**<u>Լսեցին 3</u>. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ */Զեկ. Ա.Ավետիսյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 18-րդ հոդվածի 42-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-րդ մասով, ***Վեդի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման երրորդ եռամսյակի հաղորդումը՝ համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:**

| ***Կողմ-12*** | ***Դեմ -0*** | ***Ձեռնպահ-9*** |
|---|---|---|
| ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ | | ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ |
| ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ | | ՀՌՈՒԿՅԱՆ ՆԱՐԵԿ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ | | ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ |
| ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՍԵՆ | | ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ |
| ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ | | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ | | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ |
| ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՐՈԲ | | ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ |
| ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԵՄՖԻՐԱ | | ԹՈՒՐԻԿՅԱՆ ՀԱԿՈԲ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ | | ԳԵՎՈՐԳՅԱՆ ԻՇԽԱՆ |
| ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ | | |
| ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ | | |
| ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ | | |

*<u>Որոշումն ընդունված է/կցվում է N 120-Ա որոշումը/</u>*

**<u>Լսեցին 4</u>. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 196-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ */Զեկ. Ա.Ավետիսյան/***

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկն ու աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետի զեկույցը՝ ***Վեդի համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի՝ «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 196-Ն որոշման NN 1, 2, 3 և 4 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:**

| *Կողմ-12* | *Դեմ -0* | *Ձեռնպահ-9* |
|---|---|---|
| ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ | | ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ |
| ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ | | ՀՈՌԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ | | ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ |
| ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՍԵՆ | | ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ |
| ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ | | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ | | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ |
| ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՐՈԲ | | ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ |
| ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԵՄՖԻՐԱ | | ԹՈՒՐԻԿՅԱՆ ՀԱԿՈԲ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ | | ԳԵՎՈՐԳՅԱՆ ԻՇԽԱՆ |
| ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ | | |
| ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ | | |
| ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ | | |

***Որոշումն ընդունված է/կցվում է N 121-Ն որոշումը/***

**Լսեցին 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** ***/Զեկ. Բ.Շահինյան/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ.-ի թիվ 286-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Վեդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***Վեդի համայնքի ավագանին որոշում է.***

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարին՝ աճուրդային կարգով օտարել Վեդի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:**

Վեդի համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Ա.Գրիգորյանը նշեց, որ որոշման նախագծին կից ներկայացված աճուրդային կարգով օտարվող հողերի վերաբերյալ կազմված հավելվածի 9-րդ կետում նշված՝ Վեդի համայնքի Այգավան բնակավայրի 03-008-0653-0002 կադաստրային ծածկագիրը կրող հողամասի վերաբերյալ իր ունեցած տեղեկությունների համաձայն առկա է վեճ երկու հարևանների միջև, առկա են անօրինական շինություններ, որի փաստը հաստատեց նաև նիստը վարողը, ով հայտնեց, որ աշխատակազմի համապատասխան մասնագետների կողմից այց է կատարվել նշված հասցե և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով միջոցներ կձեռնարկվեն իրավախախտում կատարած անձանց նկատմամբ համապատասխան միջոցներ կիրառելու ուղղությամբ: Ա.Գրիգորյանը առաջարկեց, նշված հողամասը հանել աճուրդով օտարման ենթակա հողամասերի ցանկից՝ հարևանների միջև առկա վեճը էլ ավելի չխորացնելու համար: Առաջարկն ընդունվեց՝ քննարկման ներկայացված որոշման նախագծին կից ներկայացված հավելվածի 9-րդ կետը հանվեց աճուրդով օտարվող հողամասերի ցանկից:

*Կողմ-21* *Դեմ -0* *Ձեռնպահ-0*

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՐՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԵՄՖԻՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀՈՌԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԹՈՒՐԻԿՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԻՇԽԱՆ

***Որոշումն ընդունված է/կցվում է N 122-Ա որոշումը/***

**Լսեցին 6**. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 03-076-0165-0063 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*/Զեկ. Բ.Շահինյան/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Մխիթար Արմենի Բունիաթյանի կողմից լիազորված անձ Հայկանուշ Ալեքսանդրի Հովհաննիսյանի դիմումը՝ ***Վեդի համայնքի ավագանին որոշում է.***

1. ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Ոսկետափ բնակավայրում գտնվող, 03-076-0165-0063 կադաստրային ծածկագիրը կրող, գյուղատնտեսական նպատակային նշանակության, կորիզավոր գործառնական նշանակության 0.0956 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները պարզեցված կարգով փոփոխել և դասել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների

հողեր նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակության՝ պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսություն կառուցելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:**

***Կողմ-21*** ***Դեմ -0*** ***Ձեռնպահ-0***

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՐՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԵՄՖԻՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀՌՈՒԿՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԹՈՒՐԻԿՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԻՇԽԱՆ

***Որոշումն ընդունված է/կցվում է N 123-Ա որոշումը/***

**Լսեցին 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՐՑԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 03-095-0394-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*/Զեկ. Բ.Շահինյան/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և

հիմք ընդունելով Վաղինակ Ջիվանբեկի Քոչարյանի կողմից լիազորված անձ Ջիվան Խաչատուրի Քոչարյանի դիմումը՝ ***Վեդի համայնքի ավագանին որոշում է.***

1. ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Ուրցաձոր բնակավայրում գտնվող, 03-095-0394-0002 կադաստրային ծածկագիրը կրող, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայր գործառնական նշանակության 1.6 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները պարզեցված կարգով փոփոխել և դասել ջրային նպատակային նշանակության, ջրային գործառնական նշանակության՝ արհեստական լճակներ կառուցելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:**

***Կողմ-21*** ***Դեմ -0*** ***Ձեռնպահ-0***

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՐՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԵՄՖԻՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀՈՌԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԹՈՒՐԻԿՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԻՇԽԱՆ

***Որոշումն ընդունված է/կցվում է N 124-Ա որոշումը/***

**Լսեցին 8**. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ

**ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ** ***/Զեկ. Բ.Շահինյան/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Վեդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***Վեդի համայնքի ավագանին որոշում է.***

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարին՝ մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրել Վեդի համայնքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:**

***Կողմ-21*** ***Դեմ -0*** ***Ձեռնպահ-0***

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՐՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԵՄՖԻՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀՈՌԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԹՈՒՐԻԿՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԻՇԽԱՆ

***Որոշումն ընդունված է/կցվում է N 125-Ա որոշումը/***

**Լսեցին 9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՆՇԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ՝ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԵՐԻՑ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ*/Զեկ. Հ.Ստեփանյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Վեդի համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 28-ի N 15-Ա որոշմամբ հաստատված «Վեդի համայնքի ավագանու կանոնակարգի» 119-120-րդ, 122-123-րդ կետերով, հաշվի առնելով այն փաստը, որ Վեդի համայնքի ավագանու կողմից գումարված 2024 թվականի առաջին նստաշրջանի հերթական նիստերից և քվեարկություններից բացակայելու պատճառների վերաբերյալ Վեդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2024 թվականի հուլիսի 9-ի գրությամբ ներկայացված ժամկետում Նշան Հակոբյանի կողմից չի ներկայացվել «Վեդի համայնքի ավագանու կանոնակարգի» 120-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, ավելին, Վեդի համայնքի ավագանու հերթական նիստերից բացակայելու պատճառների մասին Նշան Հակոբյանը չի տեղեկացրել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին, ինչն արձանագրվել է նաև գումարված հերթական նիստերի վերաբերյալ կազմված ավագանու նիստերի արձանագրություններում, ***Վեդի համայնքի ավագանին որոշում է՝***

1. ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու կողմից 2024 թվականին գումարած հերթական նստաշրջանի ընթացքում, 2024 թվականի փետրվարի 15-ի, ապրիլի 10-ի, մայիսի 8-ի, հունիսի 5-ի, հունիսի 26-ի ավագանու հերթական նիստերից ու քվեարկություններից Վեդի համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Նշան Հակոբյանի բացակայությունները համարել անհարգելի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:**

| ***Կողմ-12*** | ***Դեմ -9*** | ***Ձեռնպահ-0*** |
|---|---|---|
| ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ | ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ | |
| ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ | ՀՈՌԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ | |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ | ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ | |
| ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՍԵՆ | ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ | |
| ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ | |
| ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՐՈԲ | ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ | |
| ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԵՄՖԻՐԱ | ԹՈՒՐԻԿՅԱՆ ՀԱԿՈԲ | |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ | ԳԵՎՈՐԳՅԱՆ ԻՇԽԱՆ | |
| ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ | | |
| ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ | | |
| ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ | | |

***Որոշումն ընդունված է/կցվում է N 126-Ա որոշումը/***

**<u>Լսեցին 10</u>. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՍԵՐՈԲ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԵՐԻՑ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ** ***/Զեկ. Հ.Ստեփանյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Վեդի համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 29-ի N 80-Ա որոշմամբ հաստատված «Վեդի համայնքի ավագանու կանոնակարգի» 119-120-րդ, 122-123-րդ կետերով, հաշվի առնելով այն փաստը, որ Վեդի համայնքի ավագանու կողմից գումարված 2024 թվականի առաջին նստաշրջանի հերթական նիստերից և քվեարկություններից բացակայելու պատճառների վերաբերյալ Վեդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2024 թվականի հուլիսի 9-ի գրությամբ ներկայացված ժամկետում Սերոբ Ավետիսյանի կողմից չի ներկայացվել «Վեդի համայնքի ավագանու կանոնակարգի» 120-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, ավելին, Վեդի համայնքի ավագանու հերթական նիստերից բացակայելու պատճառների մասին Սերոբ Ավետիսյանը չի տեղեկացրել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին, ինչն արձանագրվել է նաև գումարված հերթական նիստերի վերաբերյալ կազմված ավագանու նիստերի արձանագրություններում, սակայն հաշվի առնելով Վեդի համայնքի ավագանու հերթական նիստերից բացակայելու պատճառների մասին Սերոբ Ավետիսյանի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 9-ին գումարված հերթական նիստի ընթացքում ներկայացրած բացատրությունները, ***Վեդի համայնքի ավագանին որոշում է՝***

1. ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու կողմից 2024 թվականին գումարած հերթական նստաշրջանի ընթացքում 2024 թվականի մարտի 13-ի, ապրիլի 10-ի, մայիսի 8-ի, հունիսի 5-ի, հունիսի 26-ի ավագանու հերթական նիստերից ու քվեարկություններից Վեդի համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Սերոբ Ավետիսյանի բացակայությունները համարել հարգելի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:**

Հարցի քննարկումից հետո Վեդի համայնքի ավագանու կանոնակարգի 123-րդ կետով սահմանված կարգով հարցի քննարկումից հետո նիստը նախագահողը ելույթ ունենալու համար խոսքը տրամադրեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Ս.Ավետիսյանին, ով հայտնեց, որ նախորդ նստաշրջանի ընթացքում ավագանու նիստերից իր բացակայությունները պայմանավորված են եղել աշխատանքի վայրում գտնվելու փաստով, սակայն նշեց, որ գործատուի հետ ձեռք է բերել պայմանավորվածություն ավագանու նիստերին մասնակցության համար ամսվա ընթացքում մեկ օր բացակայելու վերաբերյալ:

Լսելով Ս.Ավետիսյանի կողմից ներկայացված պարզաբանումները, նիստը վարողը առաջարկեց որոշման նախագիծը լրամշակել և քննարկման դնել՝ Ս.Ավետիսյանի բացակայությունները հարգելի համարել: Որոշման նախագիծը լրամշակվեց և քննարկման դրվեց՝ «Ս.Ավետիսյանի բացակայությունները հարգելի համարել» խմբագրությամբ:

***Կողմ-11*** ***Դեմ -0*** ***Ձեռնպահ-0***

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՄԻՐՁՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԵՄՖԻՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ

***Որոշումն ընդունված է/կցվում է N 127-Ա որոշումը/***

**Լսեցին 11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՍԵՎԱԿ ԱՂԱԲԵԿՅԱՆԻ՝ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԵՐԻՑ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ** ***/Զեկ. Հ.Ստեփանյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Վեդի համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 29-ի N 80-Ա որոշմամբ հաստատված «Վեդի համայնքի ավագանու կանոնակարգի» 119-120-րդ, 122-123-րդ կետերով, հաշվի առնելով այն փաստը, որ Վեդի համայնքի ավագանու կողմից 2024 թվականի առաջին նստաշրջանի ընթացքում գումարված հերթական նիստերից և քվեարկություններից բացակայելու պատճառների վերաբերյալ Վեդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2024 թվականի հուլիսի 9-ի գրությամբ ներկայացված ծանուցման ժամկետում, ինչպես նաև ծանուցումը ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում http://www.azdarar.am/ տեղադրվելուց հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում Սևակ Աղաբեկյանի կողմից չի ներկայացվել «Վեդի համայնքի ավագանու կանոնակարգի» 120-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, ***Վեդի համայնքի ավագանին որոշում է՝***

1. ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու կողմից 2024 թվականի հերթական նստաշրջանի ընթացքում 2024թ-ի ապրիլի 10-ի, մայիսի 8-ի, հունիսի 5-ի, հունիսի 26-ի ավագանու հերթական նիստերից և քվեարկություններից Վեդի համայնքի ավագանու «Իմ հզոր համայնք» խմբակցության անդամ Սևակ Աղաբեկյանի բացակայությունները համարել անհարգելի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:**

Վեդի համայնքի ավագանու «Իմ հզոր համայնք» խմբակցության ղեկավար Վ.Վարդանյանը հայտնեց, որ խմբակցության անդամ Ս.Աղաբեկյանը, ավագանու նիստերից իր բացակայությունների վերաբերյալ տեղեկացրել է աշխատակազմի քարտուղարին, սակայն հարցը ընդգրկվել է ավագանու նիստի օրակարգ: Նշեց, որ տվյալ պարագայում անիմաստ է դառնում նիստից բացակայության վերաբերյալ աշխատակազմի քարտուղարին տեղեկացնելու անհրաժեշտությունը: Հարցին ի պատասխան, աշխատակազմի քարտուղարը հայտնեց, որ Վեդի համայնքի ավագանու կանոնակարգը նախատեսում է ինչպես ավագանու անդամի նիստերից բացակայելու վերաբերյալ աշխատակազմի քարտուղարին նախապես տեղեկացնելու, այնպես էլ ավագանու անդամի նիստերից բացակայելու վերաբերյալ հարցի քննարկումը, այսինքն, անկախ ավագանու անդամի կողմից աշխատակազմի քարտուղարին տեղեկացնելու հանգամանքից, ավագանու անդամի նիստերից բացակայությունների վերաբերյալ որոշման նախագիծը պետք է քննարկվի համայնքի ավագանու կողմից: Այսինքն, ավագանին որպես ՏԻ մարմին ինքն է որոշում ավագանու անդամի բացակայության հարգելիության կամ անհարգելիության հարցը:

| ***Կողմ-12*** | ***Դեմ -9*** | ***Ձեռնպահ-0*** |
| --- | --- | --- |
| ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ | ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ | |

ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՐՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԵՄՖԻՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀՈՒԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԹՈՒՐԻԿՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԻՇԽԱՆ

***Որոշումն ընդունված է/կցվում է N 128-Ա որոշումը/***

**Լսեցին 12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԸ (ՎԵԴԻ ՔԱՂԱՔԸ) ՆԵՐԱՌՈՂ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՐԱՐԱՏ-8 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
***/Զեկ. Բ.Շահինյան/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ, 8-րդ հոդվածներով, 56-րդ հոդվածի 5-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով «Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի հուլիսի 30-ի Հայաստանի Հանրապետության օրենքը, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ կետը, ՀՀ Վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 2-ի N 2/փ-398 եզրակացությունը և հաշվի առնելով «ՎԵԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Դ.Ղազարյանի դիմումը՝ ***Վեդի համայնքի ավագանին որոշում է.***

1. 03-004-0084-0035 կադաստրային ծածկագիրը կրող 0.306 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողեր գործառնական նշանակության, 03-004-0084-0039 կադաստրային ծածկագիրը կրող 0.12128 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողեր գործառնական նշանակության, 03-004-0084-0057 կադաստրային ծածկագիրը կրող 0.5031 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության, 03-004-0084-0043 կադաստրային ծածկագիրը կրող 0.15336 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխել և դասել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր գործառնական նշանակության և վերը նշված կադաստրային ծածկագրերը կրող հողամասերի համար հարկայնությունը 12 հարկ (ԲՆԿԳ-4 բարձրահարկ կառուցապատման գոտի):

2. 03-004-0084-0057 կադաստրային ծածկագիրը կրող 0.5031 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը ենթակա է վճարման Վեդի համայնքի 900425102143 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:**

***Կողմ-21*** ***Դեմ -0*** ***Ձեռնպահ-0***

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՐՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԵՄՖԻՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀՌՈՒԿՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԹՈՒՐԻԿՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԻՇԽԱՆ

***Որոշումն ընդունված է/կցվում է N 129-Ա որոշումը/***

**Լսեցին 13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ*/Զեկ. Հ.Ստեփանյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով, հիմք ընդունելով Վեդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***Վեդի համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշել 2024 թվականի նոյեմբերի 6-ին, ժամը 11:00-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:**

*Կողմ-21* *Դեմ -0* *Ձեռնպահ-0*

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՐՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԵՄՖԻՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀՌՌԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԹՈՒՐԻԿՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԻՇԽԱՆ

***Որոշումն ընդունված է/կցվում է N 130-Ա որոշումը/***

**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՐՈԲ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀՌՌԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԵՄՖԻՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԹՈՒՐԻԿՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԻՇԽԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**